խագահող ազգային եկեղեցական այս մեծ յօբելեանի, հայ եկեղեցու և ժողովրդի բարգաւաճման և բարօրութեան համար, մաղթելով որ եկող 1913 թ. հոկտ. 12-ին, երբ մենք նորից կը գումարվենք այստեղ աւելի մեծ շուքով և համազգայնօրէն տօնելու համազգային մեծ տօնը, իրագործված լինի այն մեծ ակտը, որով Նորին Վեհափառութիւնը կամեցաւ յաւերժացնել այս մեծ տօնը, այն է՝ իրագործված լինի դպրոցական ֆօնդը»։

## ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՈԲԵԼԵԱՆԻ ՇՈՒՐՋԸ

—

(Նամակ խմբագրութեան)

Թիֆլիս, 13 հոկտեմբերի

«Մշակ» հայ լրագրի խմբագրութեան։

Հաճեցէք ընդունել ձեր երիտասարդ եղբայրակցից՝ «Утро Тифлиса» թերթի խմբագրութիւնից մտերիմ ողջոյն հայ ժողովրդի կեանքի նշանաւոր դէպքի առիթով —սիրոյ և եղբայրութեան մեծ նախակարապետների, հայկական թարգմանիչ-գրիչների՝ Մեսրոպ Մաշտոցի և Սահակի ու նախատպագրիչ—«Պարզատումարի» տպագրիչ—Յակոբի պատուին տրվող տօնախմբութիւնների սկզբնաւորութեան առիթով։ Փառք և յաւերժ երախտագիտութիւն թէ հայոց լեզուի այդ առաջին կարապետներին և իրանց ժողովրդի մէջ ուսումն տարածողներին և թէ տպագրութեան յետագայ տարածիչներին և ազնիւ վաստակաւորներին, որոնք հազարամեայ խժդժութիւնների, վայրագ բռնութիւնների մէջ ուսուցանում էին ժողովրդին ճշմարտութեան, բարութեան և սիրոյ խօսքերը։

Ժողովրդի 15-դարեայ կուլտուրական գոյութեան հիմքի վրա կառուցվում է նրա աներկբայելի մեծութիւնը, և մենք, այսօրվայ հանդիսաւոր րօպէին, ակնածութեամբ խոնարհեցնում ենք մեր գլուխները այդ մեծութեան առաջ և թոյլ ենք տալիս մեզ միանալ երախտապարտ հայ ժողովրդի երախտագիտական զգացումներին դէպի «ոսկէ դարի» հիմնադիրները այդ ժողովրդի գրականութեան մէջ։ Փառք։

«Утро Тифлиса» ամենօրեայ թերթի

խմբագրութիւն